ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆ. ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բալայան Մ. (Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան, ԼՂՀ)
melanyabalayan@mail.ru

Բանալի բառեր՝ թանգարան, Արցախ, ֆոնդապահոցներ, մշակույթ, արժեքներ, քարոզչություն:

Վերջին տասնամյակներում Լեռնային Ղարաբաղում ազգային պետականության վերականգնումը, սոցիալ-քաղաքական վերափոխումներն արմատապես փոխել են թանգարանային գործունեության պայմանները: Դա պայմանավորված է, մի կողմից, ազգային արժեքների ուսումնասիրման և ցուցադրության լայն հնարավորությունների ընձեռմամբ, մյուս կողմից՝ արցախյան հիմնախնդրի միջազգայնացմամբ, ինչը մեծ հետաքրքրություն է առաջացրել միջազգային հանրության և, մանավանդ, սփյուռքահայության շրջանում: Արդյունքում թանգարանի այցելուների նշանակալի վերելք է արձանագրվել: Ներկա ժամանակներում Արցախ են ժամանում մեծ թվով զբոսաշրջիկներ՝ մշակութային բարձր պահանջներով, քաղաքական միանգամայն տարաբնույթ գաղափարներով ու մոտեցումներով, մեր ազգային պատմությանն անտեղյակ կամ էլ կցկտուր տեղեկություններով, իսկ երբեմն էլ՝ բոլորովին այլ պատկերացումներով: Եվ այս ամենը, բնականաբար, նոր խնդիրներ է առաջադրում ԼՂՀ-ում առկա թանգարանային համակարգի և, մասնավորաբար, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի առջև, որովհետև հիմնականում այստեղ են հավաքագրվում ու պահպանվում արցախահայության բազմադարյան հոգևոր ու նյութական մշակույթի գանձերը, որոնց հիման վրա էլ ներկայացվում է մեր ազգային պատմությունը:

Ներկայումս թանգարանի ֆոնդապահոցներում առկա են 46060 պատմամշակութային արժեքներ, որոնցում ներառված են քարի դարից մինչև 20-րդ դարն ընդգրկող տարաբնույթ նյութեր, այդ թվում՝ հայկական դրամներ, կավե սափորներ, բրոնզե, արծաթե զարդեր, գորգեր, կարպետներ, եկեղեցական մասունքներ (սրբապատկերներ, ավետարաններ, հին տպագիր գրքեր, կարևոր պատմական նշանակության լուսանկարներ, քարտեզներ և այլն): Հարկ է միաժամանակ մատնանշել, որ հատկապես պատմամշակութային արժեքների համալրման գործընթացը գնալով ավելի պատշաճ բնույթ է ստանում՝ կապված ԼՂՀ տարածքում իրականացվող հնագիտական ուսումնասիրությունների հետ:

Փաստացիորեն թանգարանում առկա պատմամշակութային ժառանգությունն այսօր էլ իր կարևորագույն նպաստն է բերում մեր պատմության ու մշակույթի քարոզչության գործընթացին: Սակայն մի շարք հիմնախնդիրներ պարզապես նաև լուրջ արգելք են հանդիսանում դրանց առավել տպավորիչ ու պատշաճ մատուցման տեսանկյունից:

Ընդհանուր գլխավոր ու հրատապ խնդիրը տիպային շենքի բացակայության հիմնահարցն է: Հանդիսանալով Արցախում հոգևոր ու նյութական մշակույթի հուշարձանների գլխավոր պահուստարանը՝ թանգարանի շենքը պետք է համապատասխանի նրա իսկ պահանջներից բխող գործառույթներին ու ճարտարապետական կերպարին: Շենքային հիմնախնդրով էլ պայմանավորված է ժամանակակից սարքավորումներով ու ձևավորումներով ցուցադրության, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանությանը հարիր ֆոնդապահոցների ստեղծման հրատապությունն ու կարևորությունը:

Թանգարանային համակարգն այսօր պահանջում է ներդրումներ թե՛ պետության և թե՛ հովանավորների կողմից: Սակայն դա մեր ժամանակներում պետք է կատարվի այն հստակ գիտակցմամբ, որ նշված ներդրումները կատարվում են

միանգամայն շահութաբեր համակարգում՝ հաշվի առնելով այն պարզ ճշմարտությունը, որ թանգարանն ինքնին արժեք է նյութական ու հոգևոր առումներով՝ ի զորու վերածվելու տնտեսական, հասարակական, իսկ հատկապես մեր պարագայում՝ նաև քաղաքական հիմնախնդիրներ կարգավորող հզոր ներուժի:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ժամանակի պահանջներին համահունչ կառավարվող թանգարանը կարող է ոչ միայն իր գործունեությունն ընդլայնել վաստակած սեփական միջոցների հաշվին, այլև նպաստել երկրի տնտեսության զարգացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը, իսկ Արցախի պարագայում, մեր ազգային պատմությունն ու մշակույթը պատշաճորեն ու հիմնավոր ներկայացնելու շնորհիվ՝ նաև ազգային ու քաղաքական հարցերի լուծմանը:

ARTSAKH STATE HISTORICAL-GEOLOGICAL MUSEUM AS A GUARD OF THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF ARTSAKH’S ARMENIANS: THE PECULIARITIES AND THE PROBLEMS OF THE MUSEUM

Balayan M. (Artsakh State Historical-Geological Museum, Nagorno Karabakh Republic)